ՏԱՐԵԳԻՐՔ

2020

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ
ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՐԱՄԱՆԱՒ ԱՐԱՐԱՏԵԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ
ՓՈԽԱՆՈՐԴ ՏԵՐ ՆԱՒԱՍԱՐԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՃՈՅԵԱՆԻ

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄ

Արարատյան Հայրապետական թեմը կազմավորվել է 4-րդ դարի սկզբին՝ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո, երբ Սբ. Գրիգոր Լուսավորիչը ձևավորեց Հայ Առաքելական Եկեղեցու եպիսկոպոսական կառույցները:

449թ. տեղի ունեցած Արտաշատի հայտնի ժողովում կաթողիկոս Հովսեփ Հողոցմեցին (441-451թթ.) Եղիշեի կողմից անվանվում է «Եպիսկոպոս Այրարատի» (Ազգ. 400; Սրբոց Հօրն մերոյ Եղիշեի վարդապետի մատենագրութիւնք, Վենետիկ, 1859, էջ 22): Այս կարգը պահպանվեց դարերի ընթացքում և Արարատյան թեմն այսօր էլ կրում է «Հայրապետական» անվանումը՝ անմիջականորեն կառավարվելով առաջնորդական փոխանորդի կողմից, ում նշանակում է Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

1999թ. դեկտեմբերի 1-ից թեմի առաջնորդական փոխանորդն է Գերաշնորհ Տեր Նավասարդ Արքեպիսկոպոս Կճոյանը: Արարատյան հայրապետական թեմն ընդգրկում է Երևան քաղաքը և Արարատի մարզը: 2018թ. դեկտեմբերից Արարատի մարզի հոգևոր տեսուչ է նշանակվել Գերաշնորհ Տեր Գևորգ եպիսկոպոս Սարոյանը: 2020 թվականի դրությամբ Երևանում գործում է 18 եկեղեցի և 8 մատուռ, որտեղ հոգևոր ծառայություն է մատուցում 34 քահանա: Արարատի մարզում գործում է 21 եկեղեցի, 2 մատուռ: Մարզում հոգևոր ծառայություն է մատուցում 1 եպիսկոպոս և 22 քահանա:

Լինելով ազգային՝ Հայ Առաքելական եկեղեցին և ի մասնավորի՝ Արարատյան Հայրապետական թեմը կարևորում է ազգային գիտակցության և ավանդույթների զարթոնքն ու նորովի մատուցումը: Հովվական խնամքի, հոգևոր քարոզչության, սոցիալական ու կրթական առաքելությունն արդյունավետ և համակարգված իրականացնելու համար թեմում ձևավորվել են մի շարք կառույցներ՝

1. Քրիստոնեական դաստիարակության կենտրոն
2. Հայ Եկեղեցասեր երիտասարդաց միություն կրթադաստիարակչական կենտրոն
3. Խուլերի համայնք
4. Միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների հետ կապի գրասենյակ
5. Ծնողազուրկ երեխաների բարեգործական գրասենյակ
6. Տեղեկատվական բաժին՝ էլեկտրոնային քարոզչության գրասենյակով, www.qahana.am կայքով, սոցիալական ցանցերում գործող էջերով, «Շողակն Արարատյան» և «Մանանա» ռադիոհաղորդումներով
7. «Շողակն Արարատյան» ամսաթերթ
8. Գրադարան
9. Երիտասարդաց միություններ
10. Տիկնանց միություններ
11. Կիրակնօրյա դպրոցներ
12. Ծխական խորհուրդներ
13. «Շողակաթ» հոգևոր գրախանութ:

2020 թվականի ընթացքում ԱՀԹ Երևանի եկեղեցիներում կատարվել է՝

- 1.349 պսակ
- 3.889 մկրտություն

ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ

Տ. Պետրոս ավագ քին. Մալյան
Տ. Շահե քին. Հայրապետյան
Տ. Անուշավան քին. Կոշեցյան
Տ. Եսայի քին. Արթենյան

ՍՈՒՐԲ ԶՈՐԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ

Տ. Գրիգոր քին. Գրիգորյան
Տ. Հայկազուն քին. Մկրտչյան
Տ. Վահան քին. Առաքելյան

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑԻ /Կոնդ/

Տ. Տիրայր ավագ քին. Սահիրաղյան
Տ. Ավետիս ավագ քին. Դանիելյան
Տ. Դանիել քին. Բաղումյան

ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ /Նորագավիթ/

Տ. Ղուկաս քին. Բալայան
Տ. Մյուռոն ավագ քին. Ադամյան

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ /Մալաթիա-Սեբաստիա/

Տ. Տիրան ավագ քին. Առուշանյան
Տ. Մկրտիչ ավագ քին. Թովմասյան

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ /Նորք-Մարաշ/

Տ. Զաքարիա քին. Ավետիսյան
Տ. Զգոն քին. Աբրահամյան
Տ. Թովմա քին. Անդրեասյան

ՍՈՒՐԲ ԱՆՆԱ ԵՎ ԿԱԹՈՂԻԿԵ ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Տ. Զենոն քին. Բարսեղյան

ՍՈՒՐԲ ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻ /Քանաքեռ/

Տ. Շմավոն քին. Ղևոնդյան
Տ. Գաբրիել քին. Պետրոսյան

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ /Նոր Նորք/

Տ. Նորայր ավագ քին. Բաղդասարյան
Տ. Վարդան ավագ քին. Մկրտչյան
Տ. Կարապետ քին. Կարապետյան

ՍՐԲՈՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻ /Դավթաշեն/

Տ. Խորեն քին. Մարուքյան

ՍՈՒՐԲ ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻ /Ներքին Չարբախ/

Տ. Հրաչյա քին. Գյոզալյան

ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻ /Մալաթիա-Սեբաստիա/

Տ. Վարդան քին. Գափոյան
Տ. Արարատ քին. Օրդոյան

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ /Ավան/

Տ. Հարություն քին. Ավագյան

ԱՐԱԲԿԻՐԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՑԻ

Տ. Պարթև քին. Մուրադյան
Տ. Բաբկեն քին. Հայրապետյան

ԷՐԵԲՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ

Տ. Զգոն քին. Աբրահամյան

ՍՐԲՈՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻ /Նուբարաշեն/

Տ. Բարդուղիմեոս քին. Հակոբյան

ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻ /Եռաբլուր/

Տ. Զաքարիա քին. Անանյան

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ
/Նոր Նորքի 1-ին զանգված/
Տ. Աշոտ քին. Սաֆարյան

ՍՈՒՐԲ ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻ /Մրգավան/
Տ. Միքայել քին. Նուրիջանյան

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ
/Բյուրավան/
Տ. Ղազար քին. Պետրոսյան

ՍՈՒՐԲ ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻ /Արարատ/
Տ. Դավիթ քին. Սահակյան
Տ. Եզնիկ քին. Մալխասյան

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ /Արգավանդ/
Տ. Գրիգոր քին. Հովհաննիսյան

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ
/Վերին Արտաշատ/
Տ. Դավիթ քին. Կյուրեղյան

ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻ
/Ներքին Դվին/
Տ. Եղիշե քին. Նուրիջանյան

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ /Վեղի/
Տ. Հովակիմ քին. Հարությունյան

ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ /Մարմարաշեն/
Տ. Ղազար քին. Թորոսյան

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ /Դալար/
Տ. Եփրեմ քին. Հարությունյան

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ /Արևշատ/
Տ. Հովսեփ քին. Սարգսյան

ՍՐԲՈՑ ԱՌԱՔԵԼՈՑ ԵԿԵՂԵՑԻ
/Վերին Շենգավիթ/
Տ. Զարեհ քին. Աշուրյան

ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ /Կանաչուտ/
Տ. Սեդրակ քին. Աղասյան

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ /Շահումյան/
Տ. Դերենիկ քին. Միքայելյան

ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ /Մասիս/
Տ. Եզնիկ քին. Մարդիրյան

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑԻ /Մխչյան/
Տ. Պարգև քին. Պալգէորգեան

ԱՌՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ /Նորաբաց/
Տ. Մարտիրոս ավագ քին. Ավետիսյան

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ Ավետարանիչ ԵԿԵՂԵՑԻ
/Արտաշատ/
Տ. Թաթուլ քին. Գասպարյան
Տ. Երվանդ քին. Բաբայան

ՍՈՒՐԲ ԹԱԴԵՈՍ ԵԿԵՂԵՑԻ /Մասիս/
Տ. Մխիթար քին. Ալոյան

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ /Վարդաշատ/
Տ. Արտաշես քին. Հակոբյան

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ /Դաշտավան/
Տ. Աբրահամ քին. Մարտիրոսյան

ՍՈՒՐԲ ԴԱՎԻԹ ԵԿԵՂԵՑԻ /Գետազատ/
Տ. Սեդրակ քին. Աղասյան

ՍՈՒՐԲ ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻ /Բուրաստան/
Տ. Գևորգ քին. Աբյան

Թեմում սպասավորող սարկավագների անվանացանկը

Ավետիս սարկավագ Սիմոնյան
Գևորգ սարկավագ Համբարձումյան
Ալեքսանդր սարկավագ Սարգսյան
Թոմաս սարկավագ Մարդիգյան
Հովհաննես սարկավագ Ներսեսյան
Վաչագան սարկավագ Դոխոլյան
Վահե սարկավագ Շահմիրզայան
Կարեն սարկավագ Մանուկյան
Գևորգ սարկավագ Առաքելյան
Բենիկ սարկավագ Հովհաննիսյան
Սուրեն սարկավագ Սահրադյան
Հրանտ սարկավագ Սարգսյան
Հայկ սարկավագ Պալոյան

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՈՆԵՐ

ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

Հունվարի 5-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի հանդիսապետությամբ առաջնորդանիստ Սբ. Սարգիս եկեղեցում մատուցվեց Սբ. Ծննդյան Ճրագալույցի Սբ. Պատարագ: Հավարտ Սբ. Պատարագի Նավասարդ Սրբազանի նախագահությամբ ԱՀԹ առաջնորդարանում կատարվեց Տնօրհնեքի կարգ: Այնուհետև «Ծաղկազարդ» համախմբի (գեղ. ղեկավար Լիլիթ Գրիգորյան) և «Վարք հայոց» ազգագրական երգի-պարի խմբի (գեղ. ղեկավար Սարգիս Փարամազյան) ելույթներով ամփոփվեց տոնական երեկոն:

Հունվարի 6-ին՝ Քրիստոսի Սբ. Ծննդյան ու Աստվածհայտնության տոնի առթիվ, ԱՀԹ առաջնորդանիստ Սբ. Սարգիս եկեղեցում տոնական Սբ. Պատարագ մատուցեց առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը: Սբ. Պատարագի ավարտին Նավասարդ Սրբազանը Ջրօրհնեքի կարգ կատարեց:

Հունվարի 6-ին՝ Սբ. Ծննդյան և Աստվածհայտնության Սբ. Պատարագից հետո թեմի բոլոր եկեղեցիներում կազմակերպվել են խաչերթներ, մատաղի հյուրասիրություն և սիրո ճաշ:

Սբ. Ծննդյան տոնի կապակցությամբ **Արարատի մարզի Մարմարաշենի Սբ. Գևորգ եկեղեցու** և «Մասիս» երիտասարդաց միության անդամները **հունվարի 6-ին** այցելել են Խարբերդի մասնագիտացված մանկատուն, որտեղ կատարվել է Տնօրհնեքի կարգ: Այցելության ավարտին մանկատան սաներին ամանորյա նվերներ են հանձնվել:

Ամանորի և Սբ. Ծննդյան տոների առթիվ **Մասիս քաղաքում** գործող Հայկական Կարմիր խաչի ընկերության բարեգործական ճաշարանի շահառուները Մասիսի քաղաքապետարանի և Մասիսի Սբ. Թադեոս եկեղեցու նախաձեռնությամբ հյուրընկալվել են «Ֆուդ» սրճարանում: Տարեցներն իրենց շնորհակալությունն են հայտնել կազմակերպիչներին՝ իրենց չանտեսելու և մշտապես ուշադրության կենտրոնում պահելու համար:

Հունվարի 12-ին, ԱՀԹ Մալաթիայի Սբ. Աստվածածին եկեղեցու երիտասարդաց միության հրավերով, Սբ. Ծննդյան և Աստվածհայտնության տոնի առթիվ **«Ջերմիկ անկյուն»-ի տան**

բնակիչներն իրենց սոցաշխատողների և մանկավարժների ուղեկցությամբ հյուր էին եկել Սբ. Աստվածածին եկեղեցի, որտեղ մասնակցել են Սբ. Պատարագին: Ապա եկեղեցուն կից երիցատան դահլիճում մասնակցել են Սբ. Ծննդյան ավետարանական դրվագներով ու շարականներով համեմված գեղեցիկ միջոցառմանը, որ ներկայացրել է երիտասարդաց միությունը: Ավարտին նվերներով հյուր են եկել Զմեռ պապն ու Զյունանուշը:

Հունվարի 19-ին Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի դահլիճում **բեմադրվել է «Երազանքների տնակը»** Սբ. Ծննդյան բարեգործական ներկայացումը, որը կազմակերպել էր Զորավոր Սբ. Աստվածածին եկեղեցու տիկնանց միությունը և որի հասույթը տրամադրվել է «Արև-երեխաներ» ՀԿ-ին: Ներկայացման սցենարի հեղինակը ծխական խորհրդի և տիկնանց միության անդամ Տաթևիկ Պետրոսյանն էր: Ներկայացմանը իրենց մասնակցությունն էին բերել Զորավոր Սբ. Աստվածածին եկեղեցու համայնքի անդամներ, տարբեր մասնագիտությունների տեր անձինք, Երևանի տարբեր դպրոցներից ու բուհերից աշակերտներ և ուսանողներ, «Մասունք» ազգագրական երգի-պարի համույթի անդամներ, «Էլիտ» և «Փոքրիկ Նանեներ» պարային համույթների սաներ:

ԲԱՆԱԿԻ ՕՐԸ

Հունվարի 28-ին՝ Հայոց բանակի 28 ամյակի առթիվ, ԱՀԹ մի շարք եկեղեցիներում, օրվա խորհրդին ընդառաջ, տեղի են ունեցել միջոցառումներ:
Արաբկիր համայնքի եկեղեցու հոգևորականները Առնո Բաբաջանյան համերգասրահում մասնակցել են բանակի օրվան նվիրված համերգի, որի ընթացքում հանդես են եկել օրհնության խոսքով:
ԱՀԹ **Ներքին Դվինի** Սբ. Հարություն եկեղեցու Դվինցի չորս հայորդիների՝ Գուրգեն Բարեղամյանի, Գևորգ Ղարագաղյանի, Արթուր Խաչատրյանի և Հակոբ Խաչատրյանի հիշատակը հավերժացնող հուշարձանի մոտ կատարվել է Հոգեհանգստյան կարգ:
Արտաշատի Սբ. Հովհաննես Ավետարանիչ եկեղեցու հոգևորականներն Արտաշատի համայնքապետարանի աշխատակիցների հետ այցելեցել են Արցախյան պատերազմի առաջին կարգի զինհաշմանդամ Արտակ Նիկողոսյանին: Եկեղեցականները կատարել են Տնօրհնեքի կարգ, ապա բժշկության աղոթք բարձրացրել առ Աստված՝ Արտակ Նիկողոսյանի և նրա ծնողների համար, ովքեր ևս ունեն առողջական լուրջ խնդիրներ:
Վեղի քաղաքի մշակույթի տանը տեղի է ունեցել բանակին նվիրված հայրենասիրական միջոցառում, որն ուղեկցվել է ազգային երգ ու պարով: Նույն օրը Տնօրհնեքի կարգ է կատարվել ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ զոհված Անդրանիկ Զոհրաբյանի ընտանիքում:

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ

Փետրվարի 8-ին Սբ. Սարգիս զորավարի, նրա Մարտիրոս որդու և 14 զինվորների տոնն էր:

ԱՀԹ առաջնորդանիստ Սբ. Սարգիս եկեղեցու բակում, Երևանի Կենտրոն վարչական շրջանի Մշակույթի բաժնի նախաձեռնությամբ, Սբ. Սարգիս զորավարի տոնի նախորդ օրը, կազմակերպվել էր նախատոնական համերգ, որի ընթացքում ելույթ ունեցավ «Վերադարձ» երգի-պարի ազգագրական խումբը: Սուրբ Սարգիս առաջնորդանիստ եկեղեցի այցելած երիտասարդներին Երևանի Կենտրոն վարչական շրջանի Մշակույթի բաժնի նախաձեռնությամբ բաժանվեցին աղաբլիթներ:

Երիտասարդների և սիրո բարեխոս Սբ. Սարգսի տոնին գրքով սիրո խոստովանություն անելու հնարավորություն էին ընձեռել ԱՀԹ-ն և «Բուկինիստ» ընկերությունը՝ իրականացնելով ավանդական դարձած «Իմ գաղտնի գրքասեր. Սիրո խոստովանություն գրքով» ծրագիրը

Փետրվարի 8-ին՝ Սբ. Սարգիս զորավարի տոնի առթիվ, ԱՀԹ-ի՝ սրբի անունը կրող բոլոր եկեղեցիներում մատուցվել է Սբ. Պատարագ: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի արտոնմամբ առաջնորդանիստ Սբ. Սարգիս եկեղեցի էր բերվել Սբ. Սարգսի մասունքակիր աջն, իսկ Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի Մատենադարանից՝ 17-րդ դարում Սբ. Սարգիս եկեղեցում ընդօրինակված Ավետարանը:

Սբ. Սարգսի տոնի առթիվ ԱՀԹ առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը պարգևատրել է ծառայության ընթացքում աչքի ընկած լավագույն զինվորներին, ինչը երախտիքի դրսևորում է մեր սահմաններն անառիկ պահող զինվորներին: Պարգևատրվողների ցուցակը տրամադրել է ՀՀ Պաշտպանության նախարարությունը: Սբ. Սարգիս զորավարի խորհրդանշական խաչերի և դրամական պարգևների են արժանացել 20 զինծառայողներ:

Սբ. Պատարագից և զինվորների պարգևատրման արարողությունից հետո, արդեն ձևավորված ավանդույթի համաձայն, ԱՀԹ երիտասարդների նախաձեռնությամբ առաջնորդանիստ Սբ. Սարգիս եկեղեցուց Մաշտոց և Բաղրամյան պողոտաներով երիտասարդներ, եկեղեցական համայնքների անդամներ, զինվորականներ, Հայորդաց տների սաներ, հասարակական կազմակերպությունների անդամներ, բուհերի ուսանողներ և այլք մասնակցեել են **միասնական խաչերթին** դեպի Սիրահարների այգի, որտեղ ԱՀԹ կողմից կազմակերպվել էր տոնական համերգ:

Փետրվարի 8-ին ԱՀԹ առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիկոպոս Կճոյանի հանդիսապետությամբ **Հայաստանի նկարիչների տանը բացվել է Սբ. Սարգսի տոնին նվիրված հանրապետական երիտասարդական 7-րդ ցուցահանդես-մրցույթը**, որի կազմակերպիչներն էին ԱՀԹ-ն, Աշխարհի հայ նկարիչների միությունը և Հայաստանի նկարիչների միությունը: Ցուցահանդես-մրցույթի համար սահմանվել էր 4 անվանակարգ՝ գեղանկար, գրաֆիկա, քանդակ, դեկորատիվ-կիրառական արվեստ, յուրաքանչյուր անվանակարգում՝ երեքական մրցանակ: Մասնակցում էին մինչև 35 տարեկան նկարիչներ Հայաստանից ու արտերկրից: Լավագույնը համարված աշխատանքներն ԱՀԹ կողմից արժանացան դրամական պարգևների:

Սբ. Սարգսի տոնի առթիվ հայտարարված **լրագրողական աշխատանքների մրցույթի** նպատակն էր ԶԼՄ-ների և սոցիալական մեդիայի հնարավորություններն օգտագործելով՝ սիրո թեմայով լրագրողական նյութերի ստեղծումն ու տարածումը: Սահմանված էին 4 անվանակարգեր՝ «Լավագույն հեռուստանյութ», «Լավագույն ռադիոնյութ», «Լավագույն տպագիր հոդված», «Լավագույն առցանց հրապարակում»:

«Լավագույն տպագիր հոդված» անվանակարգում հաղթող ճանաչվեց Արմենակ Դավթյանի «Եվ երդվեց՝ իր տղան երբեք այդ դառնությունը չի զգա… ու հանուն իր առաջնեկի՝ ամեն ինչ կանի, որ էլ բանտ չվերադառնա» աշխատանքը:
«Լավագույն հեռուստանյութ» անվանակարգում մրցանակ ստացավ Հանրային հեռուստաընկերության «Առավոտ լուսո» ծրագրի «Որքանո՞վ է բանակն ու սերը համատեղելի» տեսանյութի հեղինակ Լիլիթ Խաչատրյանը:
«Լավագույն ռադիոնյութ» անվանակարգում մրցանակը տրվեց «Իմ ռադիո»-ի եթերում «Իմ օրը» հաղորդաշարի «Սիրո ուժն է անհաղթ» թողարկման հեղինակներ Սևակ Հակոբյանին և Սյուզի Լևոնյանին:
«Լավագույն առցանց հրապարակում» անվանակարգում մրցանակ ստացավ Քնարիկ Մարտիրոսյանը՝ «Sputnik Armenia» -ում հրապարակած «Նրանք սիրո մասին չէին խոսում, չէին գրկախառնվում հանրության առաջ. մի կյանք ապրեցրած սերը» նյութով:

Փետրվարի 7-ին կազմակերպվել են մի շարք տոնական միջոցառումներ.

Երիտասարդական ակումբների դաշնությունը, Հայ Եկեղեցու համաշխարհային երիտասարդական միավորումը Հովհ. Թումանյանի անվան թանգարանում երիտասարդների համար գեղեցիկ միջոցառում էր կազմակերպել՝ մեծ երախտավորի առաջին բանաստեղծությունից վերցված գեղեցիկ տողերի կարգախոսով՝

«Թե կան դասեր, կա նաև սեր»: Ի դեպ, այդ օրը սեր խոստովանող և այդ սերն ընդունող զույգերի համար անակնկալներ են նախատեսված:

Հայաստանի ազգային գրադարանի Թամանյանական մասնաշենքի մեծ դահլիճում ելույթ ունեցան Նոր Նորքի Հայորդաց տան սաները: Պահպանված ու մոռացված ժողովրդական ավանդույթների, սովորությունների մասին ներկայացրեց բանասեր, բանահավաք Գոհար Գոգոլյանը:

«Ժողովրդական արվեստի հանգույց» հիմնադրամում, արդեն ավանդույթ դարձած բանախոսությունների շրջանակում, Մետաքսի Ճանապարհ Հյուրանոցի դահլիճում զրույց է տեղի ունեցել Սբ. Սարգիս զորավարի քաջության մասին: Զրույցը վարել է ԱՀԹ տեղեկատվական բաժնի հոգևոր համակարգող Տեր Եսայի քահանա Արթենյանը:

«LOFT»-ի և «Կէան» կրթամշակութային կենտրոնի համագործակցությամբ Երևանի ամենաերիտասարդական անկյունում ներկայացվել են Սբ. Սարգսի տոնի ազգագրական ծեսերն ու խորհուրդը: Մասնակիցների համար ազգագրական խաղ է կազմակերպվել, իսկ խոհանոցում փոխինձ ու աղի բլիթ են պատրաստել:

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ

Փետրվարի 14-ին Սբ. Պատարագ մատուցվեց բոլոր եկեղեցիներում, իսկ Սբ. Պատարագի ավարտին կատարվեց նորապսակների օրհնության կարգ: Փետրվարի 13-ին՝ Երեկոյան ժամերգությունից և Անդաստանի կարգից հետո տեղի են ունեցել հետևյալ միջոցառումները.

- **Կոնդի Սբ. Հովհաննես եկեղեցում** խարույկի վառելուն հաջորդել է «Մենք» ազգագրական երգի և պարի համույթի միջոցառումը:
- **Մալաթիայի Սբ. Աստվածածին եկեղեցում** խարույկ վառելուց հետո միջոցառմամբ հանդես են եկել կիրակնօրյա դպրոցի երեխաները:
- **Սբ. Երրորդություն եկեղեցում** ժամերգությունից հետո կատարվել է նորապսակների օրհնության կարգ, որին հաջորդել են տոնական միջոցառում՝ երեխաների մասնակցությամբ:
- **Նորագավիթի Սբ. Գևորգ եկեղեցում** ժամերգությունից հետո կատարվել է նորապսակների օրհնության կարգ, որին հաջորդել է մշակույթի տան սաների մասնակցությամբ կազմակերպված միջոցառումը:
- **Ավանի Սբ. Աստվածածին եկեղեցու բակում** ժամերգությունից և նորապսակների օրհնության կարգից անմիջապես հետո վառվել է տոնական խարույկը, ապա տեղի է ունեցել տոնական միջոցառում:

- **Արաբկիրի եկեղեցում** ժամերգությունից հետո տեղի է ունեցել տոնական միջոցառում՝ Հայորդաց տան սաների մասնակցությամբ:
- **Քանաքեռի Սբ. Հակոբ եկեղեցու բակում** ժամերգությունից հետո խարույկավառությունն ուղեկցվել է «Տարոնցիներ» ազգային երգի-պարի խմբի կատարումներով, որոնց միացել են նաև եկեղեցու բակում հավաքված երիտասարդները:

Երևանի՝ Դավթաշենի Սրբոց Նահատակաց, Սբ. Աննա և Կաթողիկե Սբ. Աստվածածին, Նորք Մարաշի Սբ. Աստվածածին, Ներքին Չարբախի Սբ. Խաչ, Նուբարաշենի Սրբոց Նահատակաց, Նոր Նորքի Սբ. Աստվածածին և Սբ. Սարգիս եկեղեցիներում ևս Տեառնընդառաջը նշվել է մեծ շուքով, մարդաշատ և բարձր տրամադրությամբ: Եկեղեցիների բակերում վառվել են խարույկներ, կազմակերպվել տոնական միջոցառումներ՝ համայնքների երիտասարդների մասնակցությամբ:

Արարատի մարզի **Դաշտավան գյուղի Սբ. Մարիամ Աստվածածին եկեղեցու** բակում հավաքվածները հնարավորություն են ունեցել մասնակցել խարույկավառության արարողությանը, ապա ունկնդրել երգեր և դիտել պարեր՝ երեխաների կատարմամբ:
Շահումյան գյուղի Սբ. Աստվածածին, Մխչյանի Սբ. Հովհաննես Մկրտիչ, Արարատի Սբ. Հակոբ, Վերին Արտաշատի Սբ. Աստվածածին եկեղեցիներում ևս կատարվել է Երեկոյան ժամերգություն, նախատոնակ, Անդաստանի կարգ, որից հետո վառվել է ավանդական խարույկը:

ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

Փետրվարի 15-ին **Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանից** մեկնարկել է Բուն Բարեկենդանի ավանդական դարձած տոնական միջոցառումների շարքը: Միջոցառման տոնական մասը ապահովել են Ղազարոս Սարյանի անվան թատերական խումբը, Անուշավան Տեր-Ղևոնդյանի անվան երաժշտական դպրոցի սաները, «Արմենիա» պարային խումբը (գեղարվեստական ղեկավար՝ Հայկ Անտոնյան) և համայնքի երիտասարդաց միության անդամներ: Տոնի խորհրդանիշ հանդիսացող Մեծ Պապուկի կերպարը ևս ներկայացված է եղել միջոցառման ընթացքում: Ցուցադրված էին բարեկենդանյան ուտեստներ, քաղցրավենիքներ, որոնք միջոցառման ավարտից հետո հյուրասիրվել են հավաքվածներին:

Փետրվարի 15-ին Բուն Բարեկենդանը տոնել են նաև **Արաբկիր համայնքի** եկեղեցու բակում: Կազմակերպվել էր միջոցառում՝ «Վան» ազգագրական երգի-պարի համույթի, «Մասունք» խմբի երաժիշտների, կիրակնօրյա դպրոցի սաների, համայնքի դհոլահարների խմբի մասնակցությամբ:

Փետրվարի 17-ին **Ավան համայնքի** դպրոցներում և մանկապարտեզներում տեղի են ունեցել Բուն Բարեկենդանի տոնակատարություններ: Միջոցառումներին մասնակցել է նաև

Ավանի մշակույթի տունը՝ բարեկենդանյան երգերով, պարերով, բեմականացմամբ:
Կրթական հաստատություններում Բուն Բարեկենդանի տոնին պատրաստվել էին մեծ շուքով՝ տոնական երգեր, պարեր, բեմականացումներ, ազգային ուտեստներ:

Փետրվարի 18-ին **Նորք-Մարաշ վարչական շրջանում** տեղի է ունեցել Բուն Բարեկենդանին նվիրված միջոցառում, որի ընթացքում հանդես են եկել Ռոբերտ Անդրեասյանի անվան «Հայկազունք» դհոլահարների խումբը, «Սասուն» և «Մանուկներ» ազգային երգի-պարի խմբերը և երգիչ Վահագն Հովհաննիսյանը՝ իր ազգային երգերով: Տոնին միացել են նաև Նորք-Մարաշ վարչական շրջանի մի խումբ մանկապարտեզներ, որոնք ցուցադրում էին ազգային տիկնիկներ, ուտելիքներ և գեղեցիկ նկարներ, իսկ մանկապարտեզների սաները՝ դիմակավորված և ազգային հագուստներով, շուրջպար են բռնել եկեղեցու բակում: Ավարտին կատարվել է նաև հյուրասիրություն՝ տոնին հատուկ կերակրատեսակներով:

Երգով, պարով, հումորով, տոնական տրամադրությամբ և համեղ ուտեստների համտեսով է ուղեկցվել Բուն Բարեկենդանի տոնը **Կենտրոն վարչական շրջանում**: Փետրվարի 18-ին Արա Սարգսյանի և Հակոբ Կոջոյանի տուն-թանգարանի բակում տեղի է ունեցել տոնին նվիրված ավանդական համերգ-բեմականացում՝ «Տոնացույց» ժողովրդական թատրոնի մասնակցությամբ: Իսկ Բարեկենդանի ուտեստների ցուցադրությանը հաջորդել է առատ տոնական հյուրասիրությունը:
Փետրվարի 19-ին **Դավթաշեն վարչական շրջանի** Սրբոց Նահատակաց եկեղեցու բակում հավաքվել էին վարչական շրջանի բնակիչներ, տարբեր կրթական հաստատությունների ներկայացուցիչներ՝ տոնելու Բուն Բարեկենդանը: Տոնակատարությունը սկսվել է Տերունական աղոթքով, ապա իրենց բարեկենդանյան համարով հանդես են եկել Դավթաշենի թիվ 192 դպրոցի սաները, իսկ վարչական շրջանի մանկապարտեզները ներկայացրել են բարեկենդանյան իրենց անկյունները՝ ազգային ձեռագործ տիկնիկներով, ուտեստներով, քաղցրավենիքով: Տոնակատարությունները շարունակվել են մանկապարտեզներում՝ ցուցադրելով Բուն Բարեկենդանի մասին տիկնիկային ներկայացումներ երեխաների համար:

Փետրվարի 19-ին Երևանի **Աջափնյակ վարչական շրջանում** կազմակերպվել է Բուն Բարեկենդանին նվիրված միջոցառում: Տոնակատարությունը տեղի է ունեցել «Աջափնյակ» գեղագիտական դաստիարակության կենտրոնում՝ նույն կենտրոնի սաների մասնակցությամբ:
Ներկաները հնարավորություն են ունեցել վայելելու կենտրոնի սաների թատերական ելույթներ, երգչախմբի ժողովրդական երգերի կատարումներ, դհոլահարների խմբի ելույթ, ժողովրդական պարերի կատարումներ, ինչպես նաև կենտրոնի սաների կողմից բեմադրված մարիոնետների թատրոն՝ Բարեկենդանի թեմայով:

Միջոցառման ավարտին ելույթ է ունեցել «Մարաթուկ» ազգագրական երգի-պարի համույթը: Ցուցադրվել են կենտրոնի սաների կողմից պատրաստված ձեռագործ զարդեր, դիմակներ և զանազան այլ իրեր՝ լրացնելով միջոցառումը:

Փետրվարի 20-ին **Շենգավիթ վարչական շրջանում՝** Ա. Տիգրանյանի անվան երաժշտական դպրոցում տոնել են Բուն Բարեկենդանը: Միջոցառումը մեկնարկել է երաժշտական դպրոցի բակից՝ լարախաղացի համարով, ուրախ տոնակատարությամբ, դիոլահարների, պարային խմբերի մասնակցությամբ: Այնուհետև տոնը տեղափոխվել է դպրոցի նախասրահ, որտեղ Հայաստանի ավանդական ուշուի ֆեդերացիայի սաները ցուցադրել են ազգային խաղեր՝ զուռնա-դհոլի ուղեկցությամբ: Դպրոցի 2-րդ հարկում ներկաները հնարավորություն ունեցան դիտելու Հ. Թումանյանի «Մի կաթիլ մեղրը» ներկայացումը՝ դպրոցի սաների մասնակցությամբ: Տեղափոխվելով դահլիճ՝ ներկաները ականատես եղան իրական բուն բարեկենդանյան ուրախ տոնակատարության: Միջոցառմանը իրենց մասնակցությունն էին բերել Ա. Տիգրանյանի անվան երաժշտական դպրոցի, Սբ. Ջրբաշյանի անվան երաժշտական դպրոցի սաները և «Նուբար» ազգագրական համույթը: Ողջ ընթացքում ցուցադրված էին տարատեսակ բարեկենդանյան կերակրատեսակներ, քաղցրավենիք, որոնք արդեն միջոցառման ավարտին ներկաները հնարավորություն ունեցան համտեսելու:

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում ժողովրդական տոները բնակիչների առօրյայի մասն են: Փետրվարի 20-ին Սբ. Երրորդություն եկեղեցու բակում տոնախմբություն էր: ԱՀԹ և Երևանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ նշվել է Բուն Բարեկենդանը: Իրենց կատարումներով հանդես են եկել «Սեբաստիա» մշակութային կենտրոնի, Ալ. Աճեմյանի անվան երաժշտական դպրոցի, Կ. Օրբելյանի անվան արվեստի դպրոցի, «Վալենս» պարային համույթի սաները: Կազմակերպվել էր նաև բարեկենդանյան, ազգային ուտեստների հյուրասիրություն:

Փետրվարի 21-ին **Նուբարաշեն վարչական շրջանի** Սրբոց Նահատակաց եկեղեցու բակում ներկաները զանազան խաղերով, երգերով և պարերով տոնում էին Բուն Բարեկենդանը: Տոնական երթին մասնակցում էին վարչական շրջանի բնակիչներ, միջնակարգ դպրոցների սաներ, մանկապարտեզների սաներ, *Արամ Մանուկյանի անվան* մարզառազմական *մասնագիտացված* դպրոցի սաներ: Երթը ընթանում էր Վ. Մոկացյանի անվան երաժշտական դպրոցի դհոլահարների խմբի ուղեկցությամբ: Հասնելով եկեղեցու բակ՝ սկսվել է դպրոցականների մասնակցությամբ բեմականացում՝ «Բարեկենդանը» վերնագրով: Մանկապարտեզների սաները ցուցադրել են լավաշ թխելու ծեսը և ներկաներին հյուրասիրել իրենց ձեռքերով պատրաստած լավաշը: Միջոցառման ընթացքում ներկայացվել են բեմականացված ժողովրդական պարային համարներ, իսկ ավարտին հանդես է եկել «Նուբար» պարային խումբը: Պատրաստվել էր նաև տոնական, բարեկենդանյան ուտեստների ցուցադրություն-հյուրասիրություն:

Փետրվարի 21-ին **Էրեբունի վարչական շրջանի** թիվ 3 մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնում տեղի է ունեցել բարեկենդանյան տոնախմբություն՝ վարչական շրջանի դպրոցականների, պատանիների մասնակցությամբ: Ցուցադրվել է հատուկ Բարեկենդանի տոնի կապակցությամբ պատրաստված բեմականացումը, ներկայացվել են բարեկենդանյան մոռացված խաղեր ու ավանդույթներ, կատարվել է հյուրասիրություն, հնչել են ավանդական երգեր: «Տարոնցիներ» ազգագրական երգի-պարի համույթի ելույթները լրացնում էին կազմակերպված միջոցառումը՝ հաղորդելով բարձր տրամադրություն:

Փետրվարի 23-ին Բարեկենդանյան միջոցառումը մեծ շուքով մեկնարկել է առաջնորդանիստ **Սբ. Սարգիս եկեղեցու** բակից, որտեղ ելույթ են ունեցել Երևանի բոլոր վարչական շրջանների դհոլահարների խումբը, ժողովրդական պարային խմբեր: Ներկաներին բարձր տրամադրություն են հաղորդել Քաջ Նազարն ու Ուստիանը՝ իրենց զրույց-կատակներով:

Ապա ազգային նվագարանների, թմբկահարների, դհոլահարների խմբերի, ազգային խմբերի կատարումների ու պարերի ուղեկցությամբ՝ միջոցառումը շարունակվել է Մաշտոցի պողոտայով ընթացող տոնական երթով: Երթի մասնակիցները Երևանի բոլոր վարչական շրջաններից էին, կրում էին իրենց իսկ պատրաստած բարեկենդանյան դիմակները և յուրաքանչյուր խաչմերուկում կանգ առնելով՝ երգում էին բարեկենդանյան երգեր, պարում ազգային շուրջպարեր: Այդկերպ տոնախմբությունը տարածվում էր Երևանի կենտրոնով, դառնում վարակիչ անգամ պատահական անցորդների համար: Երևանի Ազատության հրապարակում սկսվել է տոնախմբության հաջորդ մասը՝ բարեկենդանյան ուտեստների ցուցադրության, ազգային երգ ու պարով տոնախմբության: Ելույթ են ունեցել «Նուբար», «Վարք հայոց», «Վան» ազգագրական խմբերը: Վարչական շրջանների որոշ ներկայացուցիչներ պատրաստել էին տոնական, բարեկենդանյան ներկայացումներ, բեմադրել էին ժողովրդական պարեր՝ հատուկ օրվա համար: Նրանք ևս հնարավորություն են ունեցել ներկաների դատին հանձնել իրենց ելույթները: Կազմակերպվել էին նաև ազգային խաղերի մրցույթներ՝ երեխաների, պատանիների մասնակցությամբ:

Փետրվարի 23-ին Բարեկենդանի տոնի առթիվ **Սբ. Աննա և Կաթողիկե Սբ. Աստվածածին եկեղեցիների** բակում կազմակերպվել էր միջոցառում՝ «Հայ ասպետ» դպրոցի սաների կողմից:

Երեխաները նախ ներկայացրին Բարեկենդանի խորհուրդը, ապա շարունակեցին միջոցառումը՝ տոնական երգ ու պարով: Ազգային երգերը, որ կատարում էին աշակերտները, հիմնականում տոնի մասին էին: Միջոցառման ավարտին կարճ ժամանակով փակելով Աբովյան փողոցը՝ երեխաներն անցորդներին նվիրեցին յուղ ու բրինձ, ինչպես դա անում են համանուն հեքիաթում:

ԳԻՐՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՕՐ

Փետրվարի 19-ին՝ Գիրք նվիրելու օրվա կապակցությամբ, ԱՀԹ Նորք-Մարաշի Սբ. Աստվածածին եկեղեցու խորհրդակատար, բանաստեղծ և երգահան Տեր Թովմա քահանա Անդրեասյանն այցելել է Շենգավիթի՝ Գրիգոր Նարեկացու անվան թիվ 137 դպրոց: Հանդիպմանը մասնակցել են դպրոցի ուսուցիչները և 7-ից 9-րդ դասարանների աշակերտները: Հանդիպման ավարտին Տեր հայրը դպրոցի գրադարանին նվիրել է իր գրքերից, ընթերցել իր՝ տարբեր տարիների բանաստեղծություններից:

ԾԱՂԿԱԶԱՐԴ

Ապրիլի 5-ին Հայաստանյայց Առաքելական Սբ. Եկեղեցին նշեց Ծաղկազարդի տոնը: Այդ առթիվ բոլոր եկեղեցիներում մատուցվեց Սբ. Պատարագ: ԱՀԹ առաջնորդանիստ Սբ. Սարգիս եկեղեցում այն մատուցվեց առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի հանդիսապետությամբ: Հաշվի առնելով Հայաստանում հայտարարված արտակարգ դրությունը՝ Սբ. Պատարագը մատուցվեց դռնփակ՝ միայն հոգևորականաց դասի ու երգչախմբի մասնակցությամբ: Սբ. Պատարագն ուղիղ միացմամբ հեռարձակվում էր սոցիալական ցանցերում և հեռուստատեսությամբ:

ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Ապրիլի 11-ին Հայ Առաքելական բոլոր եկեղեցիներում մատուցվել է Սբ. Հարության Ճրագալույցի Սբ. Պատարագ: ԱՀԹ առաջնորդանիստ Սբ. Սարգիս եկեղեցում Սբ. Պատարագը մատուցվել է առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի հանդիսապետությամբ: Դռնփակ անցկացվող Սբ. Պատարագին ներկա էին միայն եկեղեցու սպասավորներն ու երգչախումբը: Հավատավոր ժողովուրդը Սբ. Պատարագին հետևելու հնարավորություն ուներ ԹեմTV/TemTV-ի ֆեյսբուքյան էջի ուղիղ հեռարձակմամբ:

Ապրիլի 12-ին Սուրբ Հարության տոնի առթիվ ԱՀԹ առաջնորդանիստ Սբ. Սարգիս եկեղեցում մատուցվել է տոնական Սբ. Պատարագ՝ Գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի հանդիսապետությամբ: Սբ. Պատարագը մատուցվել է դռնփակ: Հավատավոր ժողովուրդն այս անգամ ևս Սբ. Պատարագին հետևում էր առցանց՝ ԹեմTV/TemTV-ի ֆեյսբուքյան էջի ուղիղ հեռարձակման շնորհիվ: Հընթացս Սբ. Պատարագի՝ պատարագիչ քահանան ընթերցեց Ն.U.O.S.S. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի Սբ. Հարության ուղերձը:

Հայ Առաքելական Սբ. Եկեղեցին իր տաղավար տոներին հաջորդող օրը նվիրում է հավատով ի Քրիստոս ննջածների հիշատակին: Սբ. Հարության տոնին հաջորդող օրը, ննջեցյալների հիշատակության օր է՝ Մեռելոցը: ԱՀԹ առաջնորդանիստ Սբ. Սարգիս եկեղեցում Սբ. Հարության մեռելոց Սբ. Պատարագը, ելնելով ստեղծված իրավիճակից, մատուցվել է դռնփակ, սակայն հավատավոր ժողովուրդը Սբ. Պատարագին հնարավորություն է ունեցել հետևելու առցանց՝ ԹեմTV/TemTV-ի ուղիղ հեռարձակմամբ: Հավարտ Սբ. Պատարագի՝ կատարվել է նաև Հոգեհանգստյան կարգ, որի ընթացքում հիշատակվել են ննջեցյալների անունները: Նախորդ օրերի ընթացքում ԱՀԹ «Qahana.am» ֆեյսբուքյան էջը հայտարարություն էր տարածել, համաձայն որի՝ այն մարդիկ, ովքեր ցանկանում էին, որ իրենց ննջեցյալների անունները հիշատակվեին Մեռելոց Սբ. Պատարագի ընթացքում, կարող էին ուղարկել դրանք՝ սոցցանցի միջոցով:

ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՈՆ

Օգոստոսի 16-ին Հայ Առաքելական Սբ. Եկեղեցին նշում էր Աստվածածնի Վերափոխման տոնը, որը հինգ Տաղավար տոներից չորրորդն է և Տիրամորը նվիրված տոներից՝ ամենահինը: ԱՀԹ առաջնորդանիստ Սբ. Սարգիս եկեղեցում Սբ. Պատարագը մատուցվեց առաջնորդական փոխանորդ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի հանդիսապետությամբ: Երկարատև դադարից հետո, տոնական Սբ. Պատարագը մատուցվեց դռնբաց՝ հավատացյալների մասնակցությամբ: Սբ. Պատարագի ավարտին Նավասարդ Սրբազանի ձեռամբ կատարվեց Խաղողօրհնեքի կարգ, իսկ օրհնված ողկույզները բաժանվեցին հավատացյալներին:

ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԶՈՐԱՎԱՐԻ ՏՈՆ

Մեպտեմբերի 26-ին Հայ Առաքելական Սբ. Եկեղեցին նշում էր Սբ. Գևորգ քաջամարտիկ զորավարի, Ադոկտոսի և Ռոմանոս երգեցողի տոնը:
Ամեն տարի այս օրը ԱՀԹ-ում նշվում է մեծ շուքով, սակայն այս տարի՝ համավարակի թելադրած պայմաններից ելնելով՝ տոնը նշվել է ավելի համեստ պայմաններում:
Տոնի առթիվ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնից Արարատի մարզ է բերվել Սբ. Գևորգ զորավարի մասունքը: Վաղ առավոտից հավատացյալները հնարավորություն են ունեցել Արարատի մարզի Մասիս, Մարմարաշեն և Կանաչուտ համայնքների Սբ. Գևորգ եկեղեցիներում՝ հաղորդակից լինելու սուրբ մասունքին:

Նորագավթի Սբ. Գևորգ եկեղեցում մատուցվել է Սբ. Պատարագ, որի ավարտին կատարվել է նաև մատաղի օրհնության կարգ։
Մասիսի Սբ. Գևորգ եկեղեցում տեղի է ունեցել Սբ. Պատարագ, ապա կատարվել է նաև մատաղի օրհնության կարգ։
Մարմարաշենի Սբ. Գևորգ եկեղեցում Սբ. Պատարագից հետո ներկաները հնարավորո–ություն են ունեցել նաև հաղորդակից լինել սրբի մասունքին։
Կանաչուտի Սբ. Գևորգ եկեղեցում Սբ. Պատարագի ավարտից հետո տեղի է ունեցել գեղարվեստական միջոցառում։

ԱՂՈԹՔ ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված Արցախյան պատերազմի ընթացքում Արարատյան Հայրապետական թեմի բոլոր եկեղեցիներում ամեն օր՝ առավոտյան՝ ժամը 9.00-ին, և երեկոյան՝ ժամը 17.00-ին՝ ժամերգությունների ավարտին կատարվել է Զինվորների օրհնության կարգ։ Բացի այդ, թեմի եկեղեցիները հերթափոխով բաց են եղել մինչ կեսգիշեր։ Թեմում կատարվել են նաև Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի տնօրինությամբ Համազգային աղոթքները՝ հանուն Արցախի և հայրենյաց պաշտպանների։ Եկեղեցիներում կատարվել է նաև հիշատակի արարողություն՝ Արցախյան պատերազմում հայրենիքի պաշտպանության համար նահատակված հերոսների համար։

ՀՈՎՎԱԿԱՆ ԽՆԱՄՔ՝ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ

2020 թ.-ի Արցախյան պատերազմից հետո ԱՀԹ առաջնորդական փոխանորդ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ կազմավորվել է կամավորների խումբ՝ համակարգելու զոհված և վիրավոր զինվորների ընտանիքների հետ տարվող հովվական աշխատանքները, որոնց հիմնական նպատակը ընտանիքներին հոգեբանական, բարոյական ու սոցիալական օգնություն ցուցաբերելն է, զոհված զինվորների սգավոր ծնողներին ու հարազատներին հովվական խնամքի տակ առնելը։
Դեկտեմբերի 27-ին, ըստ վարչական շրջանների, զոհված զինվորների ընտանիքները հրավիրվել են իրենց համայնքի եկեղեցիներ, և հավարտ տարեվերջյան Սբ. և Անմահ Պատարագի՝ կատարվել է Հոգեհանգստյան կարգ՝ ի հիշատակ մեր զոհված հերոսների։ Արարողությունից հետո հոգևորականները կազմակերպել են հանդիպում զոհվածների ընտանիքների և ներկա հարազատների հետ։ Հանդիպմանը հաջորդել են հոգևորականների տնայցերը։ Զոհված զինվորների ծնողների ցանկությամբ քահանա հայրերը Սուրբ Ծննդյան Տնօրհնեքներ են կատարել իրենց բնակարաններում։
Ընտանիքների հետ կապը լինելու է շարունակական՝ նախատեսվող հովվական այցելությունների տեսքով։

ԱՀԹ-ՈՒՄ ՏՊԱԳՐՎԵԼ ԵՆ

Դեկտեմբերի 11-ին ԱՀԹ առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ լույս է տեսել ժեստերի լեզվով թարգմանված հերթական տեսասկավառակը՝ «Տասներկուսը՝ Տիրոջ առաքյալները»:
Աստվածաշունչը խուլերի մայրենի՝ ժեստերի լեզվով թարգմանելու և ներկայացնելու նախագիծը մեկնարկել է մոտ 15 տարի առաջ՝ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ: Այն միտված է Հայաստանում ապրող 3500 խուլերին տալու հնարավորություն սերտելու Սբ. Գիրքը:
Նախագծի առաջին փուլում թարգմանվել և 4 տեսասկավառակով ներկայացվել է Մանկական Աստվածաշունչը, երկրորդ փուլում՝ Ղուկասի Ավետարանը: Անցած տարի ժեստերի լեզվի թարգմանությամբ է ներկայացվել նաև «Աստվածաշնչի մարգարեները» սկավառակը: Վերջինս ներկայացնում է Քրիստոսի 12 առաքյալներին՝ նրանց վարքը, կյանքը և քարոզչությունը: Սկավառակի պատրաստման համար աշխատել են ԱՀԹ խուլերի համայնքը, ժեստերի լեզվի թարգմանիչներ, Արարատյան թեմի առցանց հեռուստաալիքը՝ «Թեմ TV»-ն: Ծրագիրն իրականացվում է Հայաստանի Աստվածաշնչային ընկերության ֆինանսավորմամբ:

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

ԱՀԹ Երևանի եկեղեցիների հովանու ներքո գործող վարչությանց՝ Երիտասարդաց, Տիկնանց միությունների, Կիրակնօրյա դպրոցների ցանկը.

	քանակ	մասնակիցների քանակ
Երիտասարդաց միություն	11	229
Տիկնանց միություն	7	99
Կիրակնօրյա դպրոց	9	312

2020 թ.	Երիտասարդաց միություն	Տիկնանց միություն	Կիրակնօրյա դպրոցներ
Առաջնորդանիստ Սբ. Սարգիս եկեղեցի	40		
Զորավոր Սբ. Աստվածածին եկեղեցի	20	20	17
Սբ. Հովհաննես եկեղեցի /Կոնդ/			25
Սբ. Աստվածածին եկեղեցի /Մալաթիա/	20		20
Սբ. Աննա և Կաթողիկե Սբ. Աստվածածին եկեղեցիներ	17	10	30
Սբ. Սարգիս եկեղեցի /Նոր Նորք/	17	10	
Սրբոց Նահատակաց եկեղեցի /Դավթաշեն/	14	13	35
Սբ. Երրորդություն եկեղեցի /ՀԱԹ/	29	15	130
Սբ. Աստվածածին եկեղեցի /Ավան/	17		10
Արաբկիրի նորակառույց եկեղեցի	12	16	11
Էրեբունի համայնք			34
Սրբոց Նահատակաց եկեղեցի /Նուբարաշեն/	18		
Սբ. Աստվածածին եկեղեցի /Նոր Նորքի 1-ին զ./	25	15	

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱԺԻՆ - Համակարգում է թեմական ու համայնքային բարեգործական ծրագրերը, կազմակերպում է սոցիալական տարբեր միջոցառումներ, համագործակցում է տեղական և միջազգային կառույցների հետ:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ - Նյութական օգնություն է տրամադրում թեմի տարածքում (Երևան և շրջակայք) մշտապես ապրող մինչև 18 տարեկան միակողմանի կամ երկկողմանի ծնողազուրկ երեխաների:

ԳՐԱԴԱՐԱՆ - ԱՀԹ գրադարանը հիմնադրվել է 1998թ.-ին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախաձեռնությամբ: Այն հոգևոր գրականությունից բացի ունի նաև պատմական, աշխարհագրական, գրական-գեղարվեստական, ինչպես նաև արվեստագիտական, ճարտարապետական, մատենագիտական-տեղեկատվական գրականություն: Գրադարանն ունի 500-ից ավելի ընթերցող և 5000-ից ավելի կտոր

գրականություն, սակայն համաճարակով պայմանավորված, այն առավելապես փակ է եղել 2020 թվականին:

ՍԻՐԻԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔ - Զորավոր Սբ. Աստվածածին եկեղեցում գործում է սիրիահայերի համայնքը: Համայնքի ներկայացուցիչների համար ամեն ուրբաթ արևմտահայերենով քարոզխոսություն է անցկացվում: Կազմակերպվում են նաև ուխտագնացություններ, ազգային պարերին նվիրված միջոցառումներ, մշակութապահպանմանը նպաստող այլ իրադարձություններ:

ԽՈՒԼԵՐԻ ՀԱՄԱՅՆՔ - Համայնքնում գործում է մնջախաղի թատրոն-ստուդիա: Առաջնորդանիստ Սբ. Սարգիս եկեղեցում կիրակնօրյա և տոնական Սբ. Պատարագները թարգմանվում են ժեստերի լեզվով: Համայնքն ունի 42 անդամ, 1 թարգմանիչ, 1 հոգևոր սպասավոր: Խուլերի համայնքը 2020թ.-ին շարունակել է Աստվածաշնչի ներկայացումը խուլերի լեզվով ներկայացնելու նախաձեռնության շուրջ աշխատանքները:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ - Համակարգում է թեմի կիրակնօրյա դպրոցների գործունեությունը՝ վերահսկելով այդ կրթօջախների ուսումնական գործընթացը, որը 2020թ.-ին, համաճարակով պայմանավորված, իրականացվել է հեռահար:

- Կիրակնօրյա դպրոցների թիվը՝ 9
- Ներգրավված երեխաների քանակը՝ 312
- Ուսուցիչների քանակը՝ 18

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԷՋ - Տեղեկատվական ու քարոզչական աշխատանքն ամբողջովին արտացոլվում է թեմի պաշտոնական կայքում՝ www.qahana.am, և սոցիալական ցանցերում՝ ֆեյսբուքյան Qahana.am, ինստագրամյան @Qahana.am_aht, Թվիթերյան @Araratyan_tem էջերում

Ֆեյսբուքյան Qahana.am էջն 2020թ. տարեվերջի դրությամբ ուներ 86,169 հետևորդ,
Ինստագրամյան @Qahana.am_aht էջն ունեցել է 3.724 հետևորդ,
Թվիթերյան @Araratyan_tem էջը՝ 554 հետևորդ,
www.qahana.am կայքում գրանցվել է 522,718 այցելություն և 2,214,003 էջի դիտում:

«ՇՈՂԱԿՆ ԱՐԱՐԱՏՅԱՆ» ԱՄՍԱԹԵՐԹ - 2020թ. լույս է տեսել «Շողակն Արարատյան» ամսաթերթի 9 համար, յուրաքանչյուրը 1000 օրինակով: Թերթին թղթակցել են մշակութային գործիչներ, բանասիրական գիտությունների թեկնածուներ, պատմական գիտությունների թեկնածուներ, թանգարանների գիտաշխատողներ, լրագրողներ: Թերթում շարունակել են տեղ գտնել «Մի լուսանկարի պատմություն», «Մենք՝ Վարդանանք», «Հոգևոր անդաստան», «Մելիքսեդեկի կոչումը», «Հոգևոր խրատանի», «Գրապանակ», «Թեմական կյանք», «Մեկը՝ տասներկուսից», «Շառավիղներ» խորագրերև և ավելացել է «Գրանկյուն»-ը: 2020թ. շարունակել է ակտիվ գործել նաև «Շողակն Արարատյան» ֆեյսբուքյան էջը, որտեղ ամենօրյա գրառումներ են կատարվում հայրաբանությունից, Աստվածաշնչից, սրբերի վարքից, ինչպես նաև թերթում տպագրված նյութերից: Էջի հետևորդների քանակը ավելի քան 8500 է:

ՔԱՐՈԶԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ - ԱՀԹ բոլոր եկեղեցիներում 2020թ.-ին կազմակերպվել են Սուրբ Գրքի սերտողության հանդիպումներ, քարոզխոսություն: Իրականացվել է 403 հոգևոր-քարոզչական միջոցառում, որոնց մասնակցել է ընդհանուր

առմամբ 13.110 հավատացյալ: Որոշ եկեղեցիներում քարոզչական հանդիպումներն ուղիղ հեռարձակվել են և բազմաթիվ հավատացյալներ հնարավորություն են ունեցել իրենց հուզող հարցերը հոգևորականին հղել թեմի սոցիալական կայքերի էջերի միջոցով:

ՀՈՎՎԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ – Քարոզչական ծրագրեր են իրականացվել համայնքների մշակութային, կրթական, հասարակական կառույցներում: Կազմակերպվել է 114 հոգևոր-քարոզչական միջոցառում, որոնց մասնակցել է ընդհանուր առմամբ 7.324 հավատացյալ: Հարկ է նշել, որ մի շարք եկեղեցիներ հեռահար քարոզխոսության կազմակերպման համար այս ընթացքում սկսել են ակտիվորեն կիրառել նաև տեսակապի հնարավորությունները:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Թեմի համայնքներում, հոգևորականների նախաձեռնությամբ իրականացվել են սոցիալական ծրագրեր.

- Շուրջ 5.200.000 (հինգ միլիոն երկու հարյուր հազար) դրամի դրամական և բնաիրային աջակցություն (մասնավորապես՝ մանկական կեր, հագուստ և սննդի փաթեթներ) է տրամադրվել անապահով ընտանիքներին և միայնակ տարեցներին:
- Նյութական օգնություն է տրամադրվել թեմի տարածքում (Երևան և շրջակայք) մշտապես ապրող ծնողազուրկ, հաշմանդամ, սիրիահայ, սուր երիկամային անբավարարություն ունեցող, դաունի համախտանիշ ունեցող, տեսողության խնդիր ունեցող, մահացած զինվորականների և կարիքավոր ընտանիքների երեխաներին: Այս ընթացքում տրամադրվել է շուրջ 5 միլիոն դրամի դրամական և բնաիրային աջակցություն:

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԽՄԲԱԿՆԵՐԸ

Եկեղեցի	Խմբակ	Մասնակիցների քանակը
Սբ. Երրորդություն	Պար	25
	Երգ	15
	Նկարչական	22
	Անգլերեն	20
Զորավոր Սբ. Աստվածածին	Զորավոր մանկունք երգչախումբ	8
Սբ. Աստվածածին (Նորք-Մարաշ)	Նկարչական	30
Կաթողիկե Սբ. Աստվածածին	Երգ	17
Սբ. Աստվածածին (Նոր Նորքի 1 զանգ.)	Գրաբար	12

ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ և ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԸ.

Սեպտեմբերի 27-ից թշնամու կողմից սանձազերծված պատերազմական իրավիճակում ԱՀԹ Երևանի եկեղեցիները, համայնքի ներկայացուցիչների, Կանանց և Երիտասարդաց միությունների, եկեղեցական ծխական խորհուրդների և բարերարների աջակցությամբ, իրականացրել են մի շարք սոցիալական, հովվական ծրագրեր ինչպես Արցախից Երևան տեղափոխվածների, այնպես էլ սահմանին արիաբար կռվող մեր զինվորների համար:

- Երևան քաղաքի բոլոր հիվանդանոցներում (Սլավմեդ ԲԿ, «Արմենիա» հանրապետական ԲԿ, «Հերացի» թիվ 1 հիվանդանոցային համալիր, «Էրեբունի» ԲԿ, «Սբ. Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ, «Շենգավիթ» ԲԿ, «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ», «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն, «Աստղիկ» ԲԿ, «Նաիրի» ԲԿ, «Արամյանց» ԲԿ, Այրվածքաբանության ազգային կենտրոն, «Մարգարյան հիվանդանոց»), որտեղ բուժօգնություն էին ստանում վիրավոր զինվորներ, նշանակված էին քահանաներ, ովքեր պարբերաբար այցելություններ էին կազմակերպում և հոգևոր խնամք իրականացնում և՛ զինվորներին, և՛ նրանց ընտանիքներին:
- Արցախից Երևան տեղափոխված շուրջ 149 ընտանիք գտնվել է ԱՀԹ Երևանի տարբեր եկեղեցիների ամենօրյա հոգածության ներքո: Նրանց տրամադրվել է հագուստ, ամեն օր սնունդ և հիգիենայի պարագաներ են ստացել եկեղեցական համայնքների կողմից: Կան ընտանիքներ, որոնք գտնվել են անձամբ հոգևորականների խնամքի ներքո:
- Այցելություն է կատարվել Արցախից տեղահանված 184 ընտանիքի, որոնց տրամադրվել են սնունդ և հիգիենայի պարագաներ:

- 915.000 (ինը հարյուր տասնհինգ հազար) ՀՀ դրամի դեղորայք և բժշկական պարագաներ են գնվել և փոխանցվել Ստեփանակերտի զինվորական հոսպիտալին՝ ըստ հոսպիտալի կողմից տրամադրված անհրաժեշտ պարագաների ցուցակի:
- Արցախից տեղահանված ընտանիքներին տրվել է շուրջ 4.000.000 (չորս միլիոն) ՀՀ դրամի բնաիրային աջակցություն: Առանձին դեպքերում տրամադրվել է մոտ 120.000 (հարյուր քսան հազար) ՀՀ դրամի չափով ֆինանսական աջակցություն:
- Այցելություն է կատարվել 14 վիրավոր զինծառայողի ընտանիքի, որոնց տրամադրվել է բնաիրային օգնություն:
- Այցելություն է կատարվել առաջնագծում գտնվող 10 զինծառայողի ընտանիքի, որոնց տրամադրվել է 600.000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ աջակցություն:
- Արցախ է ուղարկվել մոտ 7.200.000 (յոթ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամի բնաիրային օգնություն (գլխարկ, գուլպա, սվիտեր, ձեռնոց, բամբակե վարտիքներ և շապիկներ, ներքնազգեստ, տաք ծածկոց, անկողնային պարագաներ, ձմեռային բաճկոններ, ռետինե ճտքավոր կոշիկ, քնապարկեր, սնունդ):
- Պատերազմի ավարտից հետո թեմի հոգևորականները պարբերաբար այցելություններ են իրականացնում Երևան քաղաքում զոհված զինծառայողների ընտանիքներին:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԸ

Նոր կորոնավիրուսի համավարակով պայմանավորված արտակարգ դրության ժամանակաշրջանում հավատացյալների սոցիալական վիճակի վատթարացումը մեղմելու նպատակով՝ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդարանն իրականացրել է բնաիրային աջակցության ծրագիր: Օգնություն է ցուցաբերվել երևանաբնակ 1492 (հազար չորս հարյուր իննսուներկու) ընտանիքի՝ համախառն 15.209.248.4 (տասնհինգ միլիոն երկու հարյուր ինը հազար երկու հարյուր քառասունութ) ՀՀ դրամի չափով:

Մոսկվայում Ֆիլիպինների Հանրապետության դեսպանատան նախաձեռնությամբ և ֆինանսական աջակցությամբ՝ ԱՀԹ-ի միջոցով բնաիրային օգնություն է տրամադրվել շուրջ 80 ֆիլիպինցիների, ընդհանուր 956.360 (ինը հարյուր հիսունվեց հազար երեք հարյուր վաթսուն) ՀՀ դրամի չափով:

ԱՀԹ եկեղեցիները, համայնքի ներկայացուցիչների, Երիտասարդաց միությունների և եկեղեցական ծխական խորհուրդների աջակցությամբ, իրականացրել են ընդհանուր առմամբ **10.533. 850** (տասը միլիոն հինգ հարյուր երեսուներեք հազար ութ հարյուր հիսուն) ՀՀ դրամի չափով սոցիալական ծրագրեր, որոնցից.

Ըստ աջակցության տեսակների՝

բնաիրային աջակցություն	7,166,600 ՀՀԴ
դրամական աջակցություն	3,367,250 ՀՀԴ

Ըստ շահառուների՝

անհատներ (քանակ)	119
ընտանիքներ (քանակ)	1,257

Մասնավորապես՝

բնաիրային աջակցություն	**7,166,600 ՀՀԴ**
անհատներ (քանակ)	115
ընտանիքներ (քանակ)	1,196
դրամական աջակցություն	**3,367,250 ՀՀԴ**
անհատներ (քանակ)	4
ընտանիքներ (քանակ)	66

Ի ՆՊԱՍՏ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԹԵՄՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.

Ի նպաստ Մայր Տաճարի վերանորոգման ԱՀԹ-ից Մայր Աթոռ Սբ. Էջմիածնին է փոխանցվել շուրջ 2.125.500.00 (երկու միլիոն հարյուր քսանհինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

www.qahana.am